

ՄԻՆԵՐՍԵՅԻ ՆԱՄԱԿՆ ԱՌ ՇԱՅՍ(*)

«Հանդէս Հայագիտութեան» մէջ (Ս. , 149 եւ հետեւ.) պ. Գեղցեր Եղնկի եւ Պարսից կրօնական վարդապետութեան տարածման վրայ գըրելով վերստին ձեռք կառնէ այն գաղափարը , որ իբր թէ Յազկերտ Բ-ի ժամանակ (438-457) զրուանականութիւնը Պարսից պաշտօնական դաւանանքն եղած լինի : Հաստատական այս յայտարարութիւնն հիմնըւած է միակ վկայութեան մը , Եղիշէի այն նամակին վրայ , զոր հայ պատմագիրը կընծայէ Միհրնէրսեհի , որ Յազկերտ Բ-ի կողմէ Հայաստան զրկուած էր Հայերը զրադաշտական կրօնքին դարձնելու համար : Եթէ յիշեալ նամակն հարազատ վաւերագիր մը լինէր , իրողութիւնն ապացուցուած կրնար համարուիլ . բայց իրապէս ուրիշ բան չէ , այլ Եղիշէի գրչին արդիւնքը : Ասիկա կապացուցուի անով , որ ուրիշ գրող մը , Եղնիկ , Պարսից կրօնքը կը նկարագրէ գրեթէ Եղիշէի գործածած բաւերով , բայց առանց օգտուելու Եղիշէէն կամ անոր կարծեցեալ վաւերագրէն . եւ Եղնկի պատմածն աւելի կատարեալ է քան Եղիշէինը , որմէ պակասած մասերը նոյնութեամբ կը գտնուին Թէոդոր Բար-Սուհիի ասորերէն մէկ բնագրին մէջ , ինչպէս ցոյց տուած է կարիէր 1900 թ. ին Պարիսի մէջ տպած նմանագիր դիտողութեամբ մը , որ հայերէնի ալ թարգմանուած է «Հանդէս» (1900 թ. , եր. 183 եւ հետեւ.) եւ «Բանասէր» (1900 թ. , եր. 157-160) ուսումնաթերթերուն մէջ : Եղիշէի եւ Եղնկի տուած ծանօթութիւնները կը հասնին մինչեւ զրադաշտական կրօնքի այն պատմութեան , որ ցոլացուած կը տեսնուի նաեւ ասորի սրբոց վարքերուն (տե՛ս Nöldeke , «Festgruss»-ի մէջ առ Roth , եր. 34 եւ հետեւ.) եւ Թէոդորոս Մոպսուեստացու յայտնի մէկ հատուածին մէջ (յիշատակուած Փոտիոսէ) : Ըստ զրուանեան վարդապետութեան՝ զրադաշտականութեան այս պատմութիւնը յօրինուած էր ընտիր աղբիւրի մը համեմատ : Բացատրութիւններն ալ ճշտութեամբ կը համաձայնին աւետական բնագիրներու մէջ գտնուած բացատրութիւններու : Բայց որոշեալ թուականի մը վերագրելու խնդիր չի կրնար ըլլալ հոս եւ ոչ ալ պաշտօնական ո եւ է զրութեան մը հետքն կը տեսնուի :

Միհրնէրսեհի նամակին անվաւերականութեան ապացոյցը , ինչպէս տեսնուեցաւ վերի դիտողութիւններէն , բաւական համարելով , այլ եւս անօգուտ է մտնել աւելի մանրամասն քննութեան , որ բան մը

(*) Դոկտ. Ա. Մէյէի ներկայ յօդուածը համառօտութիւնն է այն քննախօսութեան , զոր կարդաց Պարիսի Ասիական Ընկերութեան 9 մայիսի նստին մէջ :

չի կրնար աւելցնել նոյն ապացոյցին վրայ : Գոնէ՛ կրնայ ըսուիլ որ բնաւ չէր սպասուեր գտնել Նդիշէի պատմութեան նման ակներեւ դրական հանգամանք ունեցող բնագրի մը մէջ դիւանատան վերաբերեալ վաւերագրի մը արտագրութիւնը :

Քննադատները լաւ ուշադրութիւն չեն ըրած այն բանին վրայ , որ Նդնկի պատմած կրօնական վարդապետութիւնը կարեւոր կէտի մը վրայ կը տարբերի Նդիշէի պատմածէն : Ըստ Նդիշէի՝ Որմիզդ եւ Արհմն (երկու պատմագիրներէն ալ այսպէս կոչուած , որ ասորի բնագրի մը փոխագրութեան հետեւողութիւն է) ծնած են նոյն իսկ Զրուանի ծոցէն , մինչդեռ Նդնկի համեմատ՝ մօրմէ մը (որուն անունը չտար) : Բնական կերեւայ կարծել , թէ այնտեղ մօր խօսքը մտցնելը վերջէն եղած խանգարում մ'է , որ դիւրաւ կը բացատրուի (տե՛ս Նէօլդէքէի յիշած ասորի հեղինակին դիտողութիւնները , անդ , եր . 37) . բայց այդ խանգարումը Նդնկի դրչէն ելած չէ , քանի որ՝ եթէ թէոզորոս Մոպսուեստացի համաձայն է Նդիշէի , թէոզոր Բար-Սունի ալ համաձայն է Նդնկի . ուրեմն Նդնիկ եւ Նդիշէ օրինակած ըլլալու են իրարու շատ մերձաւոր բայց զատ երկու ասորի աղբիւրներ :

Ա . ՄԷՅԷ

Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Մ Ա Ն Տ Օ Ն Բ

Համբարձման տօնը ինչպէս Հայոց մէջ՝ այնպէս էլ Կովկասեան ուրիշ ազգերում մի տեսակ սրբազան նշանակութիւն ունի : Այդ օրը ե՛ւ մարդուս բազմն որոշողն է եւ՝ «աղջիկ տնտղելու» օր , (հարսնացու գրանելու) եւ զբօսանքի : Այն սովորութիւնները , որ տեղի են ունենում պարբերաբար համբարձման տօնին՝ հաւանականաբար ծագած պէտք է լինեն հեթանոսութեան օրերից : Մենք կ'աշխատենք թուել այդ սովորութիւններից մի քանիսը , որոնք բաւական հետաքրքիր են :

ա . «Ջան-Գիւրում» . — Համբարձման օրը թէ քաղաքներում եւ թէ գիւղերում բնակիչները դուրս են գալիս զբօսնելու ստուերազարդ անտառներում կամ կանաչազարդ դաշտերում , կամ հաւաքւում են ո եւ է վանքի՝ մատրան բակում եւ ժողովրդական «եայլի» կապելով (չըջապար) երգում «հաբրբաններ» , «լէլէ» , «հօ՛յ եար» , «դօն արի» , «տարան-տարան» եւ այլ ժողովրդական երգեր : Ահա այս երգերն են Ջան-Գիւլումի նիւթը կազմում : Ջան-Գիւլումը հետեւեալ կերպով է կատարւում (յաճախ գերեզմանատան) . Համբարձման նախընթաց երեկոյեան վերցնում են մի աման , առհասարակ նախշուն , բերանի շուրջը զարդարում են վայրի ծաղիկներով , որ հաւաքում են դաշտում : Ամանի մէջ լցնում են